ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱԼՃԻՐԻ ԳԱՂՈՒԹԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Ալժիրի գրավումից անմիջապես հետո Ֆրանսիան սկսեց երկրի տնտեսության յուրացումը և հպատակեցումը, և որքան էլ որ լիներ դրա չափերը, Ֆրանսիայի նվաճման կարևորագույն արդյունքը պետք է համարել վերաբնակեցման քաղաքականությունը: Ալժիր ներգաղթած եվրոպացիները կազմեցին գաղութային համակարգի հիմնասյուններից մեկը, դրանով ապահովելով և արագացնելով երկրի տնտեսության հիմնական ճյուղերի մոնոպոլիզացիան ֆրանսիական կապիտալի կողմից: Եվրոպացիների վերաբնակեցումը և հատատումն իր անմիջական ազդեցությունն ունեցավ նաև Ալժիրի քաղաքական, մշակութային, և հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա:

Մինչև Ալժիրի զավթումը եվրոպացիների թիվը երկրում չնչին էր. 1730 թ. նրանց թիվը կազմում էր 2000, իսկ 1788 թ. նրանց թիվը պակասեց՝ հասնելով 500-ի: Վերջիններս հիմնականում ալժիրիցի ծովահենների կողմից գերեվարվածներն էին[1]:

Ֆրանսիական զորքերի ներխուժումից հետո եվրոպացիների թիվը սկսեց աճել: Սկզբնական շրջանում դրանք արկածախնդիր մարդիկ էին, որոնք ցանկանում էին օգտագործել իրենց համար ստեղծված բարենպաստ իրավիճակը: 1831 թ. եվրոպացիների թիվը չէր գերազանցում երեք հազարը, իսկ արդեն 1834 թ. այն հասավ 9700-ի: Նրանք հաստատվեցին ֆրանսիական բանակի վերահսկողության տակ գտնվող ծովափնյա քաղաքներում: Անհրաժեշտ է նշել, որ Ալժիր մուտք գործած եվրոպացիների հիմնական զանգվածը կազմում էին բանվորները, քաղաքային աղքատները և հողազուրկ

[1] Ланда Р. Г., Борьба алжирского народа против европейской колонозации (1830-1918), Москва, 1976, с. 78.

գյուղացիները՝ Ֆրանսիայից, Իսպանիայից, Իտալիայից և Մալտա կղզուց: Ֆրանսիացի գաղթականները կազմում էին ընդհանուր թվի միայն մեկ երկրորդը[2]:

Հստակորեն կարելի է նշել, որ հենց առաջին տարիներից ֆրանսիացիների վերաբնակեցումն Ալժիրում կրում էր ծրագրավորված բնույթ: Այդ մասին է վկայում, օրինակ, Ֆրանսիական բանակի հրամանատար և Ալժիրի նահանգապետ գեներալ Բյուժոի ծրագիրը, համաձայն որի գաղութացումն արագացնելու և հեշտացնելու նպատակով առաջարկում էր Ալժիրում հիմնադրել, այսպես կոչված զինվոր գյուղացիների բնակավայրեր, որտեղ նախատեսվում էր բնակեցնել ֆրանսիական բանակի վետերաններին[3]՝ դրանով իսկ լուծելով երկու կարևոր խնդիր՝ ապահովել ֆրանսիացիների և պահեստազորի մշտական առկայությունը:

Սակայն այս ծրագիրն աջակցություն չգտավ Փարիզի կողմից, ինչը դրդեց տեղի վարչակազմին ամեն կերպ խրախուսել և աջակցել քաղաքացիական վերաբնակեցմանը:

Այդ նպատակի իրականացման համար Ալժիրի գաղութային իշխանություններն Ալժիր, Օրան և Ֆիլիպվիլ քաղաքների շրջաններում գտնվող 124 հազար հեկտար հողատարածքներ հատկացրեցին ներգաղթյալներին: Վերաբնակեցվածներին տրամադրվելու էր անվճար 4-12 հեկտար հողաբաժիններ՝ պամանով, որ վերջիններս պարտավորվեն մշակել և մշտական բնակություն հաստատել հատկացված տարածքներում[4]: Չնայած այս հրապուրիչ առաջարկին, ֆրանսիացիները չէին ցանկանում հաստատվել Ալժիրում: Դա էր պատճառը, որ վարչակազմն սկսեց խրախուսել ոչ ֆրանսիացի եվրոպացիների ներգաղթը, մասնավորապես իսպանացիների, որոնք դեռևս մինչ Ֆրանսիայի ներխուժումը բնակություն էին հաստատել Օրան քաղաքում: Ալժիր սկսեցին ժամանել ոչ միայն եվրոպացիներ Իսպա-

---

[2] Ланда Р. Г., նշվ. աշխ., էջ 78:
[3] Ageron Ch. R., Modern Algeria, A History 1830 to the Present, Hong Kong, 1991, p. 25.
[4] Ланда Р. Г., նշվ. աշխ., էջ 77:

նիայից, Իտալիայից և Մալտայից, այլ նաև գերմանացիներ, շվեյցարացիներ, հույներ և նույնսիկ իռլանդացիներ:

Այսպիսի հետևողական ներգաղթի հետևանքով եվրոպացիների թիվը աճում էր հետևյալ տեմպերով:

Ալժիրի եվրոպացի քաղաքաբնակները[5]

	Ֆրանսիացի	Իսպանացի	Անգլիացի	Իտալացի	Մալտացի
1831թ.	1020	500	117	262	213
1841թ.	8747	4671	2483	2402	-

Արդեն Ալժիր ներգաղթի առաջին տարիներին եվրոպացիների մեջ տեղի ունեցավ բնակեցման վայրերի և մասնագիտությունների ընտրության յուրօրինակ բաժանում: Ֆրանսիացիները, որոնց մեջ գերակշռում էին զինվորականները և պետական ծառայողները, հաստատվեցին Ալժիրում և նրա շրջակայքում, իսպանացիները մեծամասամբ գտնվում էին Օրան քաղաքում ու զբաղվում էին հիմնականում այգեգործությամբ, ձկնորսությամբ ու արհեստագործությամբ: Մալտացիները գերակշռաբար առևտրականներ էին ու անասնապահներ էին և բնակվում էին Բոն նավահանգստային քաղաքում: Իսկ ինչ վերաբերում է իտալիացիներին, ապա նրանք ևս առևտրականներ էին և ձկնորսներ[6]:

Անհրաժեշտ է նշել, որ Ալժիրի եվրոպական բնակչությունն իր մեծամասնությամբ աղքատ էր: Եվ ընդհանրապես, վերջիններիս կյանքը բավական երկար ժամանակ անվտանգ և ապահով չէր: Եվրոպացի գաղթականները մահանում էին ապստամբ ալժիրցիների ձեռքից, հիվանդություններից և չքավորությունից: Դա էր պատճառներից մեկը, որ վերաբնակեցվածների միայն 10 տոկոսն էր խիզախում ապրել գյուղական վայրերում:

Եվրոպացի գաղթականներն իրենց դիրքերը որոշակի ամրապնդում զգացին միայն Էմիր Աբդ ալ-Կադրի պարտությունից (1847) և ազատագրական պայքարի ճնշումից հետո:

---

[5] Guiard C. R., Des Européennes en situation colonial, Algérie 1830-1939, Presses Universitaires de Provence, 2009, p. 21.

[6] Ланда Р. Г., История Алжира XX век, Москва, 1999, с. 17-18.

Ալժիրի գաղութացումը շարունակում էր մնալ կենտրոնական իշխանությունների գլխավոր խնդիրներից մեկը: 1848 թ. Փարիզյան աշխատավորների ապստամբությունից հետո Երկրորդ հանրապետության խորհրդարանը որոշում ընդունեց 50 միլիոն ֆրանկ տրամադրել վերջիններիս ազատվելու համար: Մոտ 100 000 անգործ արհեստավորներ և աշխատավորներ դիմեցին Ալժիրում անվճար հողատարածքներ ստանալու համար: Ի վերջո 20 000 վերաբնակ, որոնցից 15 000 Փարիզից էին, բնակեցվեցին Ալժիրում հիմնված նոր գյուղերում: Այս նորաստեղծ համայնքները, որոնց բնակիչների գերակշիռ մասը գաղափար չուներ հողագործության մասին և առանց իշխանությունների հովանավորության, թողնված բախտի քմահաճույքին, ընկան դժվարին կացության մեջ: Կարճ ժամանակում 3000 մարդ մահացավ, իսկ 7000-ը վերադարձան Ֆրանսիա[7]:

Ֆրանսիացիների մեծ մասի ներգաղթն Ալժիր պայմանավորված էր ոչ թե շահախնդրությամբ, այլ սոցիալ-տնտեսական և երբեմն նույնիսկ քաղաքական պատճառներով: Ինչպես օրինակ, 1851 թ. Լուի Բոնապարտի (Նապոլեոն III) կողմից հանրապետական կարգի կողմնակիցների արտաքսումը[8]:

Այսպիսով, ֆրանսիական իշխանությունների վարած հետևողական քաղաքականության արդյունքում հնարավոր եղավ ոչ միայն հավասարեցնել ֆրանսիացիների թիվը մյուս եվրոպացի վերաբնակների հետ, այլ նաև հետագա տարներին գերազանցել վերջիններիս:

Թվական	Ֆրանսիացի	Արտասահմանցի	Ընդհ.
1871 թ.	130.000	115.000	245.000
1881 թ.	230.000	182.000	412.000
1911 թ.	563.000	189.000	752.000
1936 թ.	819.000	127.000	946.000
1954 թ.	913.000	71.000	984.000[9]

[7] Ageron Ch. R., նշվ. աշխ., էջ 30:
[8] Sperber J., The European Revolutions, 1848-1851, Cambridge, 1994, p. 270.
[9] Guiard C. R., նշվ. աշխ., էջ 25:

Ֆրանսիական բանակի հաղթանակից հետո ֆրանսիայի իշխանություններն սկսեցին Ալժիրի արդիականացումը և եվրոպականացումը: Տնտեսական առումով այն նշանակում էր հողերի վերաբաշխում: Համաձայն 1840 թ. հրամանագրերի ֆրանսիական վարչակազմը բռնագրավեց դեյի, բեյերի, և ֆրանսիական զորքերի դեմ կռվող ցեղերի հողերը[10]: Դրա հետ մեկտեղ եվրոպացիները նաև հողերը գնում էին, ինչն առավել մեծ չափերի հասավ արաբների ազատագրական պայքարի ճնշումից հետո: Սակայն, վախենալով որ այսպիսի տեմպերով ալժիրիցիները հողազուրկ կդառնան, ինչը կհանգեցնի նոր ապստամբություններին, Նապոլեոն III 1863 թ. հայտարարեց, որ տեղաբնակ ցեղերը այսուհետ համարվում են իրենց հողերի միակ և անփոխարինելի սեփականատերեր[11]: Այսուհանդերձ, եվրոպացիներին պատկանող հողերի քանակը արագորեն աճում էր: 1830-1870 թթ. ընթացքում գաղութարարները տարբեր միջոցներով յուրացրեցին 750 000-ից ավել հեկտար հողատարածք[12]: Ֆրանսիական իշխանությունների և անհատների ձեռքում հայտնվեցին Ալժիրի լավագույն ու բերրի հողերի կեսից ավելին:

Գրավված տարածքների ինտենսիվ տնտեսական յուրացումը ճանապարհերի, կամուրջների, շինությունների, երկաթուղային գծերի կառուցումը արմատապես փոխեց երկրի ողջ շրջանների բնույթն ու պատկերը՝ դրանք վերածելով, այսպես կոչված «օգտակար Ալժիրի», որը ծառայում էր ֆրանսիայի և ֆրանսիացիների համար՝ երկրորդ շարք մղելով տեղաբնիկներին:

Այսուամենայնիվ Ալժիրի գաղութացումը շատ բան տվեց նաև Ալժիրին: Հենց սկզբից ալժիրցիները ծանոթացան եվրոպական գիտությանը ու տեխնիկային, հողագործական նոր սարքերին և այլ բազմաթիվ նորարարություններին: Հետագայում այս ամենը հանգեցրեց երկրի տնտեսական զարգացմանն ու արդիականացմանը, տեղացի-

---

[11] Le Sueur J. D., Algeria since 1989: Between Terror and Democracy, Nova Scotia, 2010, p. 6.

[12] Ланда Р. Г., Борьба алжирского народа против…, с. 72.

ների ներգրավմանը համաշխարհային քաղաքակրթությանը, ինչպես նաև մուսուլմանական միջավայրում նոր սոցիալական կառուցվածքի, խավերի և հարաբերությունների ստեղծմանը:

Այսպիսով, Ալժիր ֆրանսիացիների և եվրոպացիների ներգաղթն ու մշտական հաստատումը, էական և հսկայական ազդեցություն ունեցավ ոչ միայն Ալժիրի հետագա պատմական զարգացման ողջ ընթացքի վրա այլ նաև փոխեց երկրի կերպարը՝ վերածելով այն յուրահատուկ եվրոպական, մուսուլմանական համադրության ու ապահովելով Ֆրանսիայի գաղութային իշխանությունների և ֆրանսիացիների երկարատև ներկայությանը Ֆրանսիական Ալժիրում:

ARAM GASPARYAN
(IOS)

THE RESETTLEMENT AS THE MAIN CONSEQUENCE OF THE COLONIZATION OF ALGERIA

The French and European immigration to Algeria and permanent residence had a significant and enormous impact not only on the further historical development of Algeria but also changed the image of the country turning it into a unique European, Muslim combination and providing the French colonial authorities as well as the French long-standing presence in Algeria.